Աւաղանում։ Եփրատը եթէ պարծենում էր Թարշիշով, Կարգեմիշով, Խոլդամարով, Մալաթիայով, Մարկալով, Աշտիշատով, Ճապաղջրով, Արծնով. Արաքսը՝ Արմաւիրով, Արտաշատով, Դուինով, Անիով, Խոլմադարով, Բագրանով, Զարիշատով եւ Կարսով, Ճորոխն էլ դրանցից ետ չմնաց Աբերնեսով, Ահարով, Աշմուշէնով, Անիով, Բագդատով, Բահլով, Ախպատով, Արմաշէնով, Արտաշէնով, Արքունիսով, Խալխալով, Խախով, Մարմաշով, Մարկաշով, Մաբաշով, Ուրով, Զերմեսով, Պալխարով, Սալաջրով, Սպերով եւ Բաբերտոնով։ Այս երեքշարք քաղաքների անունները ցոյց են տալիս, որ դրանք իրարից են բղխած, բեղմնաւորուած եւ զարգացած, որոնք ձգտել են մրցել եւ իրար գերազանցել զարկ տալով քաղաքակրթութեան։

Ուր, Ուրեք, Ուրեխ, Ուրկալա, Ուրթըն, Ուրթամասի, Ուրուտ, Ուրքար եւ Ուրծմա գեղերը, որոնք շինուած են Ճորոխի Աւաղանում նախկին քաղաքների, ամրոց-բերդերի աւերակներում, որոնք դուցէ նախկին չէն աւանների շարունակութիւններն են կազմում, ցոյց են տալիս Սումմէր-Ակկադների, Հաթթերի, Միտանացիների քաղաքների անունների արձագանգը մեր աշխարհում։ Մանաւանդ Սպեր-Իսպիր աւանը, իր շրջակայքի պղնձի հանքերի պեղումներով եւ մշակոյթներով յիշեցնում է